

**«Վեոյիա Ջուր» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվություններ  
2018թ. համար**

## Բովանդակություն

Անկախ ատոլիտորական եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10





«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ  
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,  
Վ.Սարգսյանի փ. 26/1,  
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ  
Հեռախոս + 374 (10) 595 999  
Վեբ կայք www.kpmg.am

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Տնօրենների խորհրդին

### Կարծիք

Մենք իրականացրել ենք «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

### Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԻ օրենսգրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԻ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

### Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Ղեկավարությունը պատասխանատու նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պետք է իրականացնի Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատում՝ բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Ընկերությունը, կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:



Ղեկավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են ԸՆկերության ֆինանսական հաշվետվությունների գործընթացի վերահսկողության համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձրագույն աստիճանն է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնությունը, կեղծիքը, միտումնավոր բացթողումները, խեղաթյուրումները կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցումը:
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, այլ ոչ ԸՆկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:
- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:
- կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել ԸՆկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել ԸՆկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք կտեղեկացնենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Մեր անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան  
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

KPMG Armenia LLC



«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ  
23 հուլիսի 2019թ.



հազ. դրամ	Ծնթգ.	2018թ.	2017թ.*
Հասույթ	6	21,584,519	19,403,375
Վաճառքի ինքնարժեք	7	(14,654,675)	(13,665,129)
<b>Համախառն շահույթ</b>		<b>6,929,844</b>	<b>5,738,246</b>
Այլ եկամուտ		205,986	185,060
Իրացման ծախսեր	8	(2,895,823)	(2,664,265)
Վարչական ծախսեր	9	(1,965,411)	(1,703,667)
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ		(877,379)	(507,042)
Այլ ծախսեր		(216,563)	(255,952)
<b>Գործառնական գործունեության արդյունքներ</b>		<b>1,180,654</b>	<b>792,380</b>
Ֆինանսական եկամուտ	10	113,292	81,878
Ֆինանսական ծախսեր	10	(4,971,953)	(4,483,727)
<b>Զուտ ֆինանսական ծախսեր</b>		<b>(4,858,661)</b>	<b>(4,401,849)</b>
<b>Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար</b>		<b>(3,678,007)</b>	<b>(3,609,469)</b>

\* Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Այս ստանդարտներին անցման ընտրված մեթոդների համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել: ՖՀՄՍ 15-ի կիրառման կիրառման արդյունքում Ընկերությունը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը: Համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (տես՝ Ծանոթագրություն 5):

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. հուլիսի 23-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Գոռ Գրիգորյան  
Գլխավոր տնօրենի ժամանակավոր  
պաշտոնակատար



Արման Մնացականյան  
Ֆինանսական տնօրեն

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2018թ.	31 դեկտեմբերի 2017թ.*
<b>Ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	12	2,709,670	2,991,439
Ոչ նյութական ակտիվներ	13	30,727,501	29,489,461
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		304	2,668
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>33,437,475</b>	<b>32,483,568</b>
Պաշարներ	14	2,766,762	2,871,512
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	15	4,187,546	3,259,311
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	2,090,427	2,991,666
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		<b>9,044,735</b>	<b>9,122,489</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>42,482,210</b>	<b>41,606,057</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Բաժնետիրական կապիտալ		2,500,000	2,500,000
Լրացուցիչ կապիտալ		174,175	174,175
Կուտակված վնաս		(7,296,869)	(3,618,862)
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	17	<b>(4,622,694)</b>	<b>(944,687)</b>
<b>Պարտավորություններ</b>			
Պարտավորություններ Կոնցեսիայի պայմանագրի գծով	19, 24(ա)	34,508,395	32,820,806
Օժանդակ ակտիվների վերադարձման պարտավորության գծով պահուստ	20, 24(դ)	2,114,060	1,388,441
Հետաձգված հարկային պարտավորություններ	11	43,544	43,544
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>36,665,999</b>	<b>34,252,791</b>
Պարտավորություններ Կոնցեսիայի պայմանագրի գծով	19, 24(ա)	2,937,000	2,121,000
Վարկեր և փոխառություններ	21	5,359,000	4,616,968
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	22	2,142,905	1,559,985
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		<b>10,438,905</b>	<b>8,297,953</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>47,104,904</b>	<b>42,550,744</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>42,482,210</b>	<b>41,606,057</b>

\* Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Այս ստանդարտներին անցման ընտրված մեթոդների համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (տես՝ Ծանոթագրություն 5):

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտի չենթարկված)	1,500,000	-	(9,393)	1,490,607
<b>Համապարփակ վնաս</b>				
Վնաս տարվա համար	-	-	(3,609,469)	(3,609,469)
<b>Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>(3,609,469)</b>	<b>(3,609,469)</b>
<b>Գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ</b>				
<b>Ներդրումներ և բաշխումները</b>				
Սովորական բաժնետոմսերի թողարկում	1,000,000	-	-	1,000,000
Կապակցված կողմից անհատույց ստացված ակտիվներ	-	174,175	-	174,175
<b>Ընդամենը ներդրումներ և բաշխումներ</b>	<b>1,000,000</b>	<b>174,175</b>	<b>-</b>	<b>1,174,175</b>
<b>Ընդամենը գործառնություններ Ընկերության սեփականատերերի հետ</b>	<b>1,000,000</b>	<b>174,175</b>	<b>-</b>	<b>1,174,175</b>
<b>Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2,500,000</b>	<b>174,175</b>	<b>(3,618,862)</b>	<b>(944,687)</b>
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ*	2,500,000	174,175	(3,618,862)	(944,687)
<b>Համապարփակ վնաս</b>				
Վնաս տարվա համար	-	-	(3,678,007)	(3,678,007)
<b>Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>(3,678,007)</b>	<b>(3,678,007)</b>
<b>Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2,500,000</b>	<b>174,175</b>	<b>(7,296,869)</b>	<b>(4,622,694)</b>

\* Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Այս ստանդարտներին անցման ընտրված մեթոդների համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (տես՝ Ծանոթագրություն 5):



հազ. դրամ	Ծնթգ.	2018թ.	2017թ.*
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>			
Վնաս տարվա համար		(3,678,007)	(3,609,469)
<i>Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.</i>			
Մաշվածություն և ամորտիզացիա	7,8,9	2,964,047	2,534,525
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ	23(զ)(ii)	877,379	507,042
Զուտ ֆինանսական ծախսեր	10	4,858,661	4,401,849
Ոչ դրամային հասույթ շինարարության կամ արդիականացման ծառայություններից	6, 24(զ)	(3,081,769)	(2,263,164)
		<b>1,940,311</b>	<b>1,570,783</b>
<i>Փոփոխություններ հետևյալ հոդվածներում.</i>			
Պաշարներ		189,725	(671,477)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		(1,755,222)	(3,748,984)
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		586,523	1,549,765
<b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից նախքան շահութահարկի և տոկոսների վճարումը</b>		<b>961,337</b>	<b>(1,299,913)</b>
Վճարված շահութահարկ	21(բ)	(94,347)	(25,867)
Կոնցեսիայի պայմանագրի գծով պարտավորությունների վճարում	19	(2,121,000)	(1,713,000)
<b>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(1,254,010)</b>	<b>(3,038,780)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(470,769)	(992,904)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(13,402)	(91,103)
Ստացված տոկոսներ		105,442	81,878
<b>Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(378,729)</b>	<b>(1,002,129)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</b>			
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	21(բ)	-	1,000,000
Մուտքեր վարկերից և փոխառություններից	21(բ)	724,223	4,598,110
<b>Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>		<b>724,223</b>	<b>5,598,110</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ</b>		<b>(908,516)</b>	<b>1,557,201</b>
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ		2,991,666	1,432,682
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		7,277	1,783
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	16	<b>2,090,427</b>	<b>2,991,666</b>

Ընկերության ոչ դրամային ներդրումային գործունեությունը ներկայացված է Ծանոթագրություն 24-ի (զ) կետում:

\* Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը և ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Այս ստանդարտներին անցման ընտրված մեթոդների համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (տես՝ Ծանոթագրություն 5):

<b>Ծանոթագրություն</b>	<b>Էջ</b>	<b>Ծանոթագրություն</b>	<b>Էջ</b>
1. Հաշվետու կազմակերպություն	11	16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	29
2. Պատրաստման հիմունքներ	12	17. Կապիտալ և պահուստներ	29
3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ	12	18. Կապիտալի կառավարում	30
4. Գնահատումների և դատողությունների օգտագործում	12	19. Պարտավորություններ Կոնցեսիայի պայմանագրի գծով	30
5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ	14	20. Օժանդակ ակտիվներին վերադարձման պարտավորության գծով պահուստ	31
6. Հասույթ	17	21. Վարկեր և փոխառություններ	31
7. Վաճառքի ինքնարժեք	23	22. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	33
8. Իրացման ծախսեր	23	23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում	33
9. Վարչական ծախսեր	24	24. Կոնցեսիայի պայմանագիր	40
10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր	24	25. Պայմանական դեպքեր	43
11. Շահութահարկի գծով ծախս	25	26. Գործարքներ կապակցված կողմերի հետ	43
12. Հիմնական միջոցներ	26	27. Չափման հիմունքներ	45
13. Ոչ նյութական ակտիվներ	27	28. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	45
14. Պաշարներ	28	29. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	59
15. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	28		



## 1. Հաշվետու կազմակերպություն

### (ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն (Ընկերություն) գրանցվել է 2016թ. նոյեմբերի 16-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0025, Արուսյան փող. 66ա:

Ընկերության հիմնական գործունեությունը Հայաստանում ջրամատակարարման, ջրահեռացման ու կոյուղու սպասարկման ծառայությունների մատուցումն է և ջրի բաշխիչ ցանցի աշխատանքի բարելավումն է: Ընկերությունն իր գործունեությունը սկսել է 2017թ. հունվարի 1-ին, երբ ուժի մեջ մտավ 2016թ. նոյեմբերի 16-ին Ընկերության, «Վեոլիա Օ - Կոմպանի Ժենեդալ դե Օ», Ֆրանսիա («ԿԺՕ») և ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի («Շնորհատու»), միջև կնքված տասնհինգամյա պայմանագիրը («Կոնցեսիայի պայմանագիր»): Կոնցեսիայի պայմանագրի շրջանակներում Ընկերությունը Շնորհատուից ստացել է ջրաբաշխման և կեղտաջրերի հեռացման համակարգ («Ենթակառուցվածք»), ինչպես նաև այլ սարքավորումներ և նյութեր («Օժանդակ ակտիվներ»): Կոնցեսիայի պայմանագրի մանրամասները ներկայացված են Ծանոթագրություններ 19-ում, 20-ում և 24-ում:

Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների սակագները կարգավորվում և հաստատվում են Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի կողմից՝ Կոնցեսիայի պայմանագրի համաձայն:

Ընկերությունն ամբողջովին պատկանում է ԿԺՕ-ին: Ընկերության վերջնական մայր կազմակերպություն և վերջնական վերահսկող կողմն է հանդիսանում «Վեոլիա Ինվայրմենթ ՍԱ»-ը: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 26-ում:

### (բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող ընկերությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության դեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատականից:

## 2. Պատրաստման հիմունքներ

### (ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների համաձայն:

Այս ֆինանսական հաշվետվություններն իրենցից ներկայացնում են Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը, որտեղ կիրառվել են ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» և ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտների պահանջները: Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների փոփոխությունները ներկայացված են Ծանոթագրություն 5-ում:

### (բ) Անընդհատություն

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 4,622,694 հազար դրամ գումարով զուտ բացասական ակտիվներ (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 944,687 հազար դրամ գումարով բացասական ակտիվներ) և 2018թ-ին կրել է 3,678,007 հազար դրամ գումարով վնաս (2017թ-ին՝ 3,609,469 հազար դրամ):

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի վերջնական մայր կազմակերպությունը հաստատել է, որ մոտ ապագայում կտրամադրի Ընկերությանը ֆինանսական և այլ աջակցություն, որը վերջինիս կարող է պահանջվել իր գործառնական գործունեությունը շարունակելու և, հետևաբար, բնականոն գործունեության ընթացքում ակտիվներն իրացնելու և պարտավորությունները մարելու համար: Բացի այդ, վերջնական մայր կազմակերպությունը հաստատել է, որ կտրամադրի Ընկերությանը ֆինանսական աջակցություն, որը կարող է պահանջվել կապակցված կողմից ստացված փոխառության հետ կապված ֆինանսական պարտականությունները կատարելու համար, որի գծով մարման ենթակա ընդհանուր գումարը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 5,359,000 հազար դրամ:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ ղեկավարությունը գտնում է, որ գոյություն չունի էական անորոշություն անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Ընկերության կարողության հետ կապված:

## 3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

## 4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:



Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Ենթադրությունների և գնահատումների հետ կապված անորոշության վերաբերյալ տեղեկատվությունը (բացառությամբ իրական արժեքի չափումը), որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարում էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում:

- Ծանոթագրություն 24(ա) – Կոնցեսիայի պայմանագրի գծով պարտավորությունների չափում;
- Ծանոթագրություն 24(դ) – Օժանդակ ակտիվների վերադարձման պարտավորության գծով պահուստ,
- Ծանոթագրություն 23 (գ)(ii) – առևտրական և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ:

#### ***Իրական արժեքի չափում***

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև իրականացվող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում՝ ֆինանսական գործիքների հետ կապված:

## 5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը (տես՝ (Ա)) և ՖՀՄՍ 9-ը (տես՝ (Բ)) 2018թ. հունվարի 1-ից: 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել նաև մի քանի այլ նոր ստանդարտներ, սակայն այդ ստանդարտներն էական ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերության կողմից այս ստանդարտներին անցման ընտրված մեթոդների համաձայն՝ այս ֆինանսական հաշվետվություններում համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել նոր ստանդարտների պահանջներն արտացոլելու համար, բացառությամբ առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստների առանձին ներկայացման:

Այս ստանդարտների սկզբնական կիրառումն ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

### Ա. ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ»

ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինել է ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» և համապատասխան մեկնաբանությունները: ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը ճանաչվում է, երբ հաճախորդը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ: Որոշելու համար, թե երբ է տեղի ունենում վերահսկողության փոխանցումը՝ ժամանակի որոշակի պահին, թե ժամանակի ընթացքում, պահանջվում է դատողության կիրառում:

Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 15-ը օգտագործելով կումուլյատիվ ազդեցության արտացոլման մեթոդը (առանց պրակտիկ բնույթի պարզեցումների)՝ ճանաչելով ստանդարտի սկզբնական կիրառման ազդեցությունը սկզբնական կիրառման ամսաթվին (այսինքն՝ 2018թ. հունվարի 1-ին): ՖՀՄՍ 15-ի կիրառումը ազդեցություն չի ունեցել Ընկերության 2018թ. հունվարի 1-ի և 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ հասույթի ճանաչման ժամանակը և գումարն ըստ էության նույնն են ՖՀՄՍ 15-ի և ՀՀՄՍ 18-ի համաձայն:

### Բ. ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»

ՖՀՄՍ 9-ը սահմանում է ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և ոչ ֆինանսական միավորների առք ու վաճառքի որոշ պայմանագրերի ճանաչման և չափման պահանջները: Այս ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Դանաչում և չափում» ստանդարտը:

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Ընկերությունը կիրառել է ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի համապատասխան փոփոխությունները, որոնք պահանջում են առանձին տողով ներկայացնել ֆինանսական ակտիվների արժեզրկումը շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Նախկինում Ընկերությունն առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումը ներառում էր ֆինանսական ծախսեր կազմում: Արդյունքում, Ընկերությունը ՀՀՄՍ 39-ի համաձայն ճանաչված 507,042 հազար դրամ գումարով արժեզրկումից կորուստը «ֆինանսական ծախսեր» հոդվածից վերադասակարգել է «առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստ» հոդված 2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:



Բացի այդ, Ընկերությունի կիրառել է ՖՀՄՄ 7 «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ» ստանդարտի համապատասխան փոփոխությունները, որոնք կիրառելի են 2018թ. տեղեկատվության բացահայտման համար, սակայն որպես կանոն չեն կիրառվել համադրելի տեղեկատվության նկատմամբ:

Անցումը ՖՀՄՄ 9-ին ազդեցություն չի ունեցել պահուստների և չբաշխված շահույթի տարեսկզբի դրությամբ մնացորդների վրա (անցման մեթոդը ներկայացված է (iii) կետում):

**(i) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների դասակարգում և չափում**

ՖՀՄՄ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ անորտիզացված արժեքով չափվող, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՄ 9-ով նախատեսված ֆինանսական ակտիվների դասակարգումը որպես կանոն հիմնված է այն բիզնես մոդելի վրա, որի շրջանակներում կառավարվում է ֆինանսական ակտիվը, և դրամական միջոցների հոսքերի պայմանագրով նախատեսված այդ ակտիվին վերաբերող բնութագրերի վրա: ՖՀՄՄ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՄ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը:

ՖՀՄՄ 9-ը մեծամասամբ պահպանում է ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման համար գործող ՀՀՄՄ 39-ի պահանջները:

ՖՀՄՄ 9-ի կիրառումն ազդեցություն չի ունեցել ֆինանսական պարտավորություններին վերաբերող Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

Ծանոթագրություն 28-ի (թ) կետում բացատրվում է, թե ինչպես է Ընկերությունը դասակարգում և չափում ֆինանսական գործիքները, ինչ նույնպես է կիրառում փոփոխությունների նկատմամբ և ինչպես է հաշվառում համապատասխան շահույթը և վնասը ՖՀՄՄ 9-ի համաձայն:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է չափման սկզբնական դասակարգումն ՀՀՄՄ 39-ի և նոր դասակարգումն ըստ ՖՀՄՄ 9-ի Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների յուրաքանչյուր դասի համար 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

հազ. դրամ	Սկզբնական դասակարգումն ըստ ՀՀՄՄ 39	Նոր դասակարգումն ըստ ՖՀՄՄ 9	Սկզբնական հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՄ 39	Նոր հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՄ 9
<b>Ֆինանսական ակտիվներ</b>				
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	Փոխառություններ և դեբիտորական պարտքեր	Անորտիզացված արժեքով չափվող	3,067,144	3,067,144
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	Փոխառություններ և դեբիտորական պարտքեր	Անորտիզացված արժեքով չափվող	2,991,666	2,991,666
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>			<b>6,058,810</b>	<b>6,058,810</b>

հազ. դրամ	Սկզբնական դասակարգումն ըստ ՀՀՄՍ 39	Նոր դասակարգումն ըստ ՖՀՄՍ 9	Սկզբնական հաշվեկշռային արժեքն ըստ ՀՀՄՍ 39	Նոր հաշվեկշռային արժեքն ըստ ՖՀՄՍ 9
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>				
Վարկեր և փոխառություններ	Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	4,616,968	4,616,968
Պարտավորություններ Կոնցեսիայի պայմանագրի գծով	Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	34,941,806	34,941,806
Առևտրական կրեդիտորական պարտքեր	Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	Այլ ֆինանսական պարտավորու- թյուններ	1,145,526	1,145,526
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>			<b>40,704,300</b>	<b>40,704,300</b>

2018թ. հունվարի 1-ին ՖՀՄՍ 9-ի կիրառումը, այդ թվում՝ արժեզրկմանը վերաբերող նոր պահանջները, ազդեցություն չեն ունեցել ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա 2018թ. հունվարի 1-ի դրությամբ:

**(ii) Ֆինանսական ակտիվների արժեզրկում**

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած վնասի» մոդելը «սպասվող պարտքային վնասի» մոդելով: Արժեզրկման նոր մոդելը կիրառելի է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, պայմանագրային ակտիվների, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող պարտքային գործիքների, սակայն ոչ բաժնային գործիքներում ներդրումների համար: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ պարտքային վնասն ավելի է շուտ է ճանաչվում, քան պահանջվում էր ՀՀՄՍ 39-ով (տես՝ Ծանոթագրություն 28 (ի)):

ՖՀՄՍ 9-ի արժեզրկման մոդելի գործողության ոլորտում գտնվող ակտիվների համար սովորաբար ակնկալվում է, որ արժեզրկումից կորուստները կաճեն և կդառնան առավել փոփոխական: Ընկերությունը որոշել է, որ ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջների կիրառումը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ չի հանգեցնում է արժեզրկման գծով լրացուցիչ պահուստի ճանաչմանը:

Լրացուցիչ տեղեկատվությունն այն մասին, թե ինչպես է Ընկերությունն իրականացնում արժեզրկման գծով պահուստի չափումը ներկայացված է Ծանոթագրություն 28 (ի) կետում:

**(iii) Անցումը նոր ստանդարտին**

ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում հաշվապահական հաշվառման քաղաքականությունում տեղի ունեցած փոփոխությունները կիրառվել են հետընթաց: Բիզնես մոդելը, որի շրջանակներում պահվում է ֆինանսական ակտիվը, որոշվել է սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող փաստերի և հանգամանքների հիման վրա:



## 6. Հասույթ

ՖՀՄՍ 15-ի սկզբնական կիրառման ազդեցությունը հաճախորդների հետ պայմանագրերից ստացվող ընկերության հասույթի վրա ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

### (ա) Հասույթի հոսքեր

Ընկերությունը հասույթը հիմնականում ստանում է ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններից: Հասույթի այլ աղբյուրները ներառում են շինարարության կամ արդիականացման ծառայություններից ստացվող եկամուտը:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
<b>Հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից</b>		
Հասույթ ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններից		
<i>Բնակչություն</i>	12,410,475	11,490,229
<i>Իրավաբանական անձիք</i>	5,944,128	5,639,171
<b>Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից</b>	<b>18,354,603</b>	<b>17,129,400</b>
<b>Այլ հասույթ</b>		
Հասույթ շինարարության կամ արդիականացման ծառայություններից	3,081,769	2,263,164
Ցանցի միացման ծառայություններ	148,147	10,811
<b>Ընդամենը այլ հասույթ</b>	<b>3,229,916</b>	<b>2,273,975</b>
<b>Ընդամենը հասույթ</b>	<b>21,584,519</b>	<b>19,403,375</b>

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ՀՀ կառավարության 2017թ. դեկտեմբերի 21-ի թիվ 1697-Ն որոշմամբ Ընկերությունը ստացել է 1,070,171 հազար դրամ գումարով պետական սուբսիդիաներ (2017թ-ին նման սուբսիդիաներ չէին ստացվել), որոնք ներառված են ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններից ստացված հասույթի կազմում:

Ընկերությունն իրավասու էր ստանալ պետական սուբսիդիաներ տնտեսապես կենսունակ ջրամատակարարման և կեղտաջրերի սպասարկման ծառայությունների հաստատված սակագների և փաստացի նվազեցված սակագների միջև տարբերությունը փոխհատուցելու համար:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն ստացված պետական սուբսիդիաների վերաբերյալ ըստ հաճախորդների տեսակների:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
<b>Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթում ներառված պետական սուբսիդիաներ</b>		
Հասույթ ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններից		
<i>Բնակչություն</i>	724,966	-
<i>Իրավաբանական անձիք</i>	345,205	-
<b>Ընդամենը հասույթ հաճախորդների հետ պայմանագրերից</b>	<b>1,070,171</b>	<b>-</b>

**(բ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի մանրամասն ներկայացում**

Ստորև բերվող աղյուսակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շրջանների, ծառայությունների հիմնական տեսակների, հաճախորդների տեսակների և հասույթի ճանաչման ժամկետների:

Դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հազ. դրամ	Բնակչություն		Իրավաբանական անձիք		Ընդամենը	
	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
<b>Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների հիմնական աշխարհագրական շրջաններ</b>						
Երևան	6,632,019	5,996,108	3,999,363	3,914,817	10,631,382	9,910,925
Կոտայք	1,159,571	1,080,081	476,295	433,576	1,635,866	1,513,657
Արարատ	985,454	945,493	194,500	188,623	1,179,954	1,134,116
Շիրակ	774,493	719,063	253,526	195,244	1,028,019	914,307
Արմավիր	752,118	704,481	160,701	138,441	912,819	842,922
Լոռի	694,039	637,304	190,152	166,210	884,191	803,514
Սյունիք	437,538	417,603	271,188	245,681	708,726	663,284
Գեղարքունիք	334,544	354,647	81,818	73,843	416,362	428,490
Արագածոտն	292,033	294,483	95,526	79,036	387,559	373,519
Տավուշ	236,283	226,056	137,479	119,156	373,762	345,212
Վայոց Ձոր	112,383	114,910	83,580	84,544	195,963	199,454
	<b>12,410,475</b>	<b>11,490,229</b>	<b>5,944,128</b>	<b>5,639,171</b>	<b>18,354,603</b>	<b>17,129,400</b>



հազ. դրամ	2018թ.	2017թ.
<b>Շինարարության կամ արդիականացման ծառայությունների հիմնական աշխարհագրական շրջաններ</b>		
Երևան	1,106,377	1,229,599
Կոտայք	153,626	80,148
Արարատ	332,669	293,812
Շիրակ	204,984	193,947
Արմավիր	274,899	67,404
Լոռի	276,487	118,853
Սյունիք	123,803	54,147
Գեղարքունիք	89,346	2,614
Արագածոտն	327,189	172,419
Տավուշ	141,898	31,745
Վայոց Ձոր	50,491	18,476
	<b>3,081,769</b>	<b>2,263,164</b>

հազ. դրամ	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
<b>Ծառայությունների հիմնական տեսակներ</b>						
Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններ	12,410,475	11,490,229	5,944,128	5,639,171	18,354,603	17,129,400
Շինարարության կամ արդիականացման ծառայություններ	-	-	-	-	3,081,769	2,263,164
Ցանցի միացման ծառայություններ	105,348	3,559	42,799	7,252	148,147	10,811
	<b>12,515,823</b>	<b>11,493,788</b>	<b>5,986,927</b>	<b>5,646,423</b>	<b>21,584,519</b>	<b>19,403,375</b>

հազ. դրամ	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
<b>Հասույթի ճանաչման ժամկետներ</b>						
Ժամանակի ընթացքում փոխանցված ապրանքներ և ծառայություններ	12,515,823	11,493,788	5,986,927	5,646,423	21,584,519	19,403,375
<b>Հասույթ հաճախողների հետ պայմանագրերից</b>	<b>12,515,823</b>	<b>11,493,788</b>	<b>5,986,927</b>	<b>5,646,423</b>	<b>21,584,519</b>	<b>19,403,375</b>

**(գ) Պայմանագրերի գծով մնացորդներ**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի գծով ստացվելիք գումարների և պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ:

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2018թ.	1 հունվարի 2018թ.
«Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի» կազմում ներառված ստացվելիք գումարներ	15	3,416,770	2,864,565
Պայմանագրային պարտավորություններ	22	489,825	324,497

Պայմանագրային պարտավորությունները վերաբերում են ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ցանցին միացնելու համար բաժանորդներից ստացված 158,972 հազար դրամ գումարով կանխավճարներին (2017թ-ին՝ 85,546 հազար դրամ), որոնց գծով հասույթը ճանաչվում է ջրի մատակարարման պայմանագրի գործողության ընթացքում, և ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների համար բաժանորդներից ստացված 330,853 հազար դրամ գումարով կանխավճարներին (2017թ-ին՝ 238,951 հազար դրամ):

Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ պայմանագրային պարտավորությունների կազմում ճանաչված 324,497 հազար դրամ գումարը ճանաչվել է որպես հասույթ 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

Չի տրամադրվել տեղեկատվություն 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կատարման ենթակա այն պարտականությունների վերաբերյալ, որոնց սկզբնական ակնկալվող տևողությունը կազմում է մեկ տարի կամ պակաս, ինչպես դա թույլատրվում է ՖՀՄՍ 15-ով:

**(դ) Կատարման ենթակա պարտականություններ և հասույթի ճանաչման քաղաքականություն**

Հասույթը չափվում է հաճախորդի հետ պայմանագրում նշված հատուցման հիման վրա: Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ հաճախորդին է փոխանցում ապրանքի կամ ծառայության նկատմամբ վերահսկողությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդների հետ պայմանագրերի կատարման ենթակա պարտականությունների բնույթի և ժամկետների, այդ թվում՝ վճարման հիմնական պայմանների և հասույթի ճանաչման համապատասխան քաղաքականության վերաբերյալ:

Ծառայության տեսակը	Կատարման ենթակա պարտականությունների բնույթը և ժամկետները, ներառյալ՝ վճարման հիմնական պայմանները	Հասույթի ճանաչումը ՖՀՄՄ 15 համաձայն (կիրառելի է 2018թ. հունվարի 1-ից)	Հասույթի ճանաչումը ՀՀՄՄ 18 համաձայն (կիրառելի էր նախքան 2018թ. հունվարի 1-ը)
<b>Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններ</b>	<p>Ընկերությունը պարտավորվում է ջուր մատակարարել բաժանորդներին, և ջրի դիմաց վճարը որոշվում է բաժանորդի ամսական սպառած ծավալի հիման վրա: Վճարման պայմանները սահմանված են ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի («ՀԾԿՀ») կողմից սահմանված «Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների կանոններով» (ՋՄԿՀԿ), համաձայն որոնց Ընկերությունը պետք է հանրությանը հասանելի միջոցներով տեղադրի ջրի սպառման վերաբերյալ տեղեկատվությունը (ամսական սպառած ծավալը և վճարման ենթակա ընդհանուր գումարը) յուրաքանչյուր բաժանորդի համար մինչև հաշվետու ամիսը հաջորդող ամսվա 15-ը, որից հետո բաժանորդը պարտավոր է կատարել կանխիկ վճարում 7-օրյա ժամկետում: Ջեղչեր չեն տրամադրվում:</p>	<p>Հաճախորդները միաժամանակ ստանում և օգտագործում են ջրամատակարարման և/կամ կեղտաջրերի հեռացման ծառայությունների օգուտները՝ վերջիններից մատուցմանը զուգահեռ, և Ընկերությունը ծառայության նկատմամբ վերահսկողությունը փոխանցում է ժամանակի ընթացքում, այդ իսկ պատճառով, իր պարտականությունները կատարում է և հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում: Փոփոխական հատուցումը, որն իրենից ներկայացնում է սպառված կամ հեռացված ջրի ծավալի և գործող սակագների արտադրյալը, որոշվում է յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում վերցված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:</p>	<p>Պայմանագրի գծով հասույթը ճանաչվում էր ամսական կտրվածքով՝ սպառված ջրի և/կամ մաքրված կեղտաջրերի ծավալի հիման վրա:</p>
<b>Միացում ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ցանցին</b>	<p>Ընկերությունն իրականացնում է բաժանորդներին ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ցանցին միացման աշխատանքներ: Վճարման պայմանները սահմանված են ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի («ՀԾԿՀ») կողմից սահմանված «Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների կանոններով» (ՋՄԿՀԿ), համաձայն որոնց միացման վճարի 80%-ը վճարվում է որպես կանխավճար, իր մնացած մասը վճարվում է միացման աշխատանքներն ավարտելուց հետո: Յուրաքանչյուր նախագծի տևողությունը չի գերազանցում 120 օրը՝ Կարգավորողի կողմից սահմանված առավելագույն ժամկետի համաձայն:</p>	<p>Ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ցանցին միացման աշխատանքների ընթացքում բաժանորդներին ապրանքների կամ ծառայությունների փոխանցում տեղի չի ունենում և, այդ իսկ պատճառով, դրանք դիտարկվում են որպես տեղադրման ծառայություններ: Այսպիսով, հասույթը ճանաչվում է ջրամատակարարման պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում: Ստացված կանխավճարները ներառվում են պայմանագրային պարտավորությունների կազմում:</p>	<p>Հասույթը ճանաչվում էր, երբ բաժանորդին էին փոխանցվում ապրանքների և ծառայությունների սեփականության հետ կապված ռիսկերը և հատույցները:</p>



Ծառայության տեսակը	Կատարման ենթակա պարտականությունների բնույթը և ժամկետները, ներառյալ՝ վճարման հիմնական պայմանները	Հասույթի ճանաչումը ՖՀՄՍ 15 համաձայն (կիրառելի է 2018թ. հունվարի 1-ից)	Հասույթի ճանաչումը ՀՀՄՍ 18 համաձայն (կիրառելի էր նախքան 2018թ. հունվարի 1-ը)
<b>Շինարարության կամ արդիականացման ծառայություններ</b>	<p>Կոնցեսիոն պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պարտավորվում է իրականացնել 37,500,000 հազար դրամ գումարով պարտադիր կապիտալ աշխատանքներ ջրամատակարարման ենթակառուցվածքի արդիականացման ուղղությամբ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և կատարել անհրաժեշտ համարվող այլ կապիտալ ծախսումներ:</p> <p>Ընկերությունը ճանաչում է շինարարության համար ստացված հատուցումը որպես ոչ նյութական ակտիվ՝ այնքանով, որքանով այն ստանում է հանրային ծառայության օգտագործողներից վճար գանձելու իրավունք: Հանրային ծառայության օգտագործողներից վճար գանձելու իրավունքն անվերապահ իրավունք չէ ստանալ կանխիկ կամ այլ ֆինանսական ակտիվներ, քանի որ գումարները պայմանավորված են այն աստիճանով, որքանով հանրությունն օգտվում է ծառայությունից: Ըստ էության, Ընկերությունը կրում է պահանջարկի հետ կապված ռիսկերը:</p>	<p>Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում ծախսային մեթոդի հիման վրա: Համապատասխան ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակ:</p>	<p>Երբ պայմանագրի արդյունքը հնարավոր էր արժանահավատորեն գնահատել, պայմանագրից հասույթը ճանաչվում էր պայմանագրի ավարտվածության աստիճանին համամասնորեն:</p> <p>Ավարտվածության աստիճանը գնահատվում էր հիմք ընդունելով կատարված աշխատանքների ուսումնասիրությունը: Այլ դեպքերում պայմանագրից ստացվող հասույթը ճանաչվում էր միայն կատարված պայմանագրային ծախսերի չափով, որոնք ակնկալվում էին, որ կփոխհատուցվեն:</p> <p>Պայմանագրային ծախսերը ճանաչվում էին կատարվելու ժամանակ:</p>

## 7. Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Աշխատավարձ և համապատասխան հարկեր	4,293,581	4,252,333
Մաշվածություն և ամորտիզացիա	2,883,565	2,496,663
Նյութեր	1,988,572	1,199,353
Էլեկտրաէներգիա	1,811,269	1,968,925
Արտաքին կազմակերպությունների կողմից մատուցված շինարարության և համապատասխան ծառայություններ	1,804,776	1,903,319
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	1,181,361	1,140,279
Անվտանգության ծառայություն	400,055	397,115
Ռեսուրսների օգտագործման և բնապահպանության վճարներ	131,271	112,186
Ապահովագրություն	93,702	107,678
Այլ	66,523	87,278
	<b>14,654,675</b>	<b>13,665,129</b>

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 1,804,776 հազար դրամ (2017թ-ին՝ 1,903,319 հազար դրամ) գումարով արտաքին կազմակերպությունների կողմից մատուցված շինարարության և համապատասխան ծառայությունները, 1,220,939 հազար դրամ գումարով (2017թ-ին՝ 329,403 հազար դրամ) նյութերը և 56,054 հազար դրամ գումարով (2017թ-ին՝ 30,442 հազար դրամ) ախտատվարձ և համապատասխան հարկերը վերագրելի էին շինանարարության կամ արդիականացման ծառայությունների ինքնարժեքին:

## 8. Իրացման ծախսեր

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Աշխատավարձ և համապատասխան հարկեր	2,310,456	2,160,964
Գանձման վճարներ	185,717	163,563
Վարձակալություն	106,690	94,901
Նյութեր	80,003	51,411
Գովազդ	50,977	46,777
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	50,929	53,897
Մաշվածություն և ամորտիզացիա	21,256	10,996
Այլ	89,795	81,756
	<b>2,895,823</b>	<b>2,664,265</b>

## 9. Վարչական ծախսեր

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Աշխատավարձ և հարակից հարկեր	785,704	641,247
Մասնագիտական ծառայությունների վճարներ	366,503	482,314
Արտերկրյա աշխատակիցների վարձատրություն	226,453	144,853
Կոմունալ և հաղորդակցության ծառայություններ	105,255	98,822
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	95,866	55,026
Վարձակալություն	63,615	29,527
«Վեոլիա» նշանների և դոմենի անվանումների օգտագործման համար լիցենզիայի վճարներ	59,540	53,446
Մաշվածություն և ամորտիզացիա	59,226	26,866
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	32,859	27,436
Հանրային ծառայությունների կարգավորման վճարներ	29,363	25,440
Գրասենյակային ծախսեր	25,438	25,580
Այլ	115,589	93,110
	<b>1,965,411</b>	<b>1,703,667</b>

## 10. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ.		
Բանկային հաշիվների մնացորդների (ընթացիկ հաշիվների) գծով	105,442	81,878
<b>Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից առաջացող ընդամենը տոկոսային եկամուտ</b>	<b>105,442</b>	<b>81,878</b>
Ջուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	7,850	-
<b>Ֆինանսական եկամուտ - այլ</b>	<b>7,850</b>	<b>-</b>
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ – տոկոսային ծախս	(137,881)	(48,572)
Ջուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	-	(3,384)
Կոնցեսիայի պայմանագրի պարտավորության գծով զեղչի ծախսագրում (Ծնթգ. 19)	(4,624,589)	(4,267,830)
Օժանդակ ակտիվների վերադարձման պարտավորության գծով զեղչի ծախսագրում (Ծնթգ. 20)	(209,483)	(163,941)
<b>Ֆինանսական ծախսեր - այլ</b>	<b>(4,971,953)</b>	<b>(4,483,727)</b>
<b>Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր</b>	<b>(4,858,661)</b>	<b>(4,401,849)</b>



2017թ. առևտրական դեբիտորական պարտքերի գծով 507,042 հազար դրամ գումարով արժեզրկումից կորուստը ֆինանսական ծախսերի կազմից վերադասակարգվել է և ներկայացվել է առանձին տողով (տես՝ Ծանոթագրություն 5 (Բ)):

## 11. Շահութահարկի գծով ծախս

Ընկերության համար շահութահարկի կիրառելի դրույքը կազմում է 20% (2017թ-ին՝ 20%):

### Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2018թ.		2017թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Վնաս նախքան շահութահարկով հարկումը	(3,678,007)	100	(3,609,469)	100
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	(735,601)	(20.0)	(721,894)	20.0
Կիրառելի հարկային օրենսդրության փոփոխություն	(20,567)	0.6	-	-
Չնվազեցվող ծախսեր	106,925	(2.9)	171,468	(4.8)
Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների փոփոխություն, որոնց համար հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել	473,293	(12.9)	306,358	(8.5)
Ընթացիկ տարվա հարկային վնաս, որի համար հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել	175,950	(4.8)	244,068	(6.8)
	-	-	-	-

### (ա) Գճանաչված հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել հետևյալ հոդվածների գծով.

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Նվազեցվող ժամանակավոր տարբերություններ	779,651	306,358
Հարկային վնաս	421,897	245,947
	<b>1,201,548</b>	<b>552,305</b>

870,355 հազար դրամ, 1,229,734 հազար դրամ և 9,395 հազար դրամ գումարով հարկային վնասներն օգտագործելու իրավունքի ժամկետը լրանում է հասապատասխանաբար 2023թ-ին, 2020թ-ին և 2021թ-ին: Գործող հարկային օրենսդրության համաձայն՝ նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գործողությունը սահմանափակ չէ: Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել այս հոդվածների գծով, քանի որ քիչ հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Ընկերությունը կկարողանա իրացնել այդ հոդվածներից ստացված օգուտը:

## 12. Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Մեքենա- սարքավ.	Փոխադրա- միջոցներ	Տնտեսակ. գույք	Համակարգչ. սարքավ.	Այլ	Ընդամենը
<b>Մեքենաներ</b>						
<b>Սկզբնական արժեք</b>						
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտի չենթարկված)	-	23,900	-	780	-	24,680
Ավելացումներ	1,452,232	1,526,966	345,004	200,012	64,461	3,588,675
Օտարումներ	(26,239)	-	-	-	-	(26,239)
<b>Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,425,993</b>	<b>1,550,866</b>	<b>345,004</b>	<b>200,792</b>	<b>64,461</b>	<b>3,587,116</b>
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,425,993	1,550,866	345,004	200,792	64,461	3,587,116
Ավելացումներ	282,873	86,662	101,848	54,354	20,743	546,480
Փոխանցումներ	33,014	12,450	58,279	(120,435)	16,692	-
Օտարումներ	(80,948)	-	(86)	-	-	(81,034)
<b>Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,660,932</b>	<b>1,649,978</b>	<b>505,045</b>	<b>134,711</b>	<b>101,896</b>	<b>4,052,562</b>
<b>Մաշվածություն</b>						
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	-	139	-	-	-	139
Տարվա մաշվածություն	248,733	249,085	53,285	41,230	3,205	595,538
<b>Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>248,733</b>	<b>249,224</b>	<b>53,285</b>	<b>41,230</b>	<b>3,205</b>	<b>595,677</b>
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	248,733	249,224	53,285	41,230	3,205	595,677
Տարվա մաշվածություն	294,829	317,920	83,065	38,241	14,503	748,558
Փոխանցումներ	6,949	753	8,626	(20,867)	4,539	-
Օտարումներ	(526)	-	(69)	-	(748)	(1,343)
<b>Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>549,985</b>	<b>567,897</b>	<b>144,907</b>	<b>58,604</b>	<b>21,499</b>	<b>1,342,892</b>
<b>Հաշվեկշռային արժեք</b>						
2017թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտի չենթարկված)	-	23,761	-	780	-	24,541
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,177,260	1,301,642	291,719	159,562	61,256	2,991,439
<b>2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,110,947</b>	<b>1,082,081</b>	<b>360,138</b>	<b>76,107</b>	<b>80,397</b>	<b>2,709,670</b>

685,054 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2017թ-ին՝ 559,699 հազար դրամ) գրանցվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 18,688 հազար դրամը (2017թ-ին՝ 10,605 հազար դրամ)՝ իրացման ծախսերի կազմում և 44,816 հազար դրամը (2017թ-ին՝ 25,234 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում:



### 13. Ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ	Կոնցեսիայի ոչ նյութական ակտիվներ	Այլ	Ընդամենը
<b><i>Սկզբնական արժեք</i></b>			
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտի չենթարկված)	-	-	-
Ավելացումներ	31,316,011	112,437	31,428,448
<b>Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>31,316,011</b>	<b>112,437</b>	<b>31,428,448</b>
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	31,316,011	112,437	31,428,448
Ավելացումներ	3,440,128	13,401	3,453,529
<b>Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>34,756,139</b>	<b>125,838</b>	<b>34,881,977</b>
<b><i>Ամորտիզացիա</i></b>			
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-
Տարվա ամորտիզացիա	1,936,856	2,131	1,938,987
<b>Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,936,856</b>	<b>2,131</b>	<b>1,938,987</b>
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,936,856	2,131	1,938,987
Տարվա ամորտիզացիա	2,198,511	16,978	2,215,489
<b>Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>4,135,367</b>	<b>19,109</b>	<b>4,154,476</b>
<b><i>Հաշվեկշռային արժեք</i></b>			
2017թ. հունվարի 1-ի դրությամբ (աուդիտի չենթարկված)	-	-	-
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,379,155	110,306	29,489,461
<b>2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>30,620,772</b>	<b>106,729</b>	<b>30,727,501</b>

Կոնցեսիայի ոչ նյութական ակտիվները համապատասխանում են հանրային ծառայություններից օգտվողներից գումարներ գանձելու կոնցեսիատիրոջ՝ «Վեոյիա Ջուր» ՓԲԸ-ի իրավունքին՝ ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 12 «Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ» համաձայն:

Կոնցեսիայի ոչ նյութական ակտիվների 358,359 հազար դրամ գումարով ավելացումներն իրենցից ներկայացնում են օժանդակ ակտիվների վերադարձման պարտավորության գծով պահուստի գնահատման փոփոխությունը:

**(ա) Ամորտիզացիա**

2,198,511 հազար դրամ գումարով ամորտիզացիայի ծախսը (2017թ-ին՝ 1,936,964 հազար դրամ)՝ գրանցվել է վաճառքի ինքնարժեքի կազմում, 2,568 հազար դրամը (2017թ-ին՝ 391 հազար դրամ)՝ իրացման ծախսերի կազմում և 14,410 հազար դրամը (2017թ-ին՝ 1,632 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում:

**14. Պաշարներ**

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Պահեստամասեր, նյութեր և սպառողական նյութեր	2,737,641	2,829,750
Այլ	29,121	41,762
	<b>2,766,762</b>	<b>2,871,512</b>

**15. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Առևտրական դեբիտորական պարտքեր		
<i>Բնակչություն</i>	3,537,963	2,507,438
<i>Իրավաբանական անձիք</i>	1,263,228	864,169
Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(1,384,421)	(507,042)
Ստացվելիք պետական սուբսիդիաներ	98,877	-
Այլ դեբիտորական պարտքեր	531,433	202,579
<b>Փոխառությունների և դեբիտորական պարտքերի դասուն ներառված առևտրական և այլ դեբիտորական պարտքեր</b>	<b>4,047,080</b>	<b>3,067,144</b>
Ստացվելիք հարկեր	90,840	124,011
Տրված կանխավճարներ	49,626	68,156
<b>Ընդամենը առևտրական և այլ դեբիտորական պարտքեր</b>	<b>4,187,546</b>	<b>3,259,311</b>

Պարտքային և արտարժուրային ռիսկերին Ընկերության ենթարկվածության և առևտրական և այլ դեբիտորական պարտքերի հետ կապված արժեզրկումից կորուստների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

## 16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Բանկային հաշիվների մնացորդներ (ընթացիկ հաշիվներ)	2,090,274	2,991,539
Կանխիկը դրամարկում	153	127
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում</b>	<b>2,090,427</b>	<b>2,991,666</b>

Տոկոսադրույքի ռիսկին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը և ֆինանսական ակտիվների և պարտավորությունների զգալունության վերլուծությունը ներկայացված են Ծանոթագրություն 23-ում:

## 17. Կապիտալ և պահուստներ

### (ա) Բաժնետիրական կապիտալ

*Բաժնետոմսերի քանակը, եթե այլ տեղեկատվություն  
նշված չէ*

	Սովորական բաժնետոմսեր	
	2018թ.	2017թ.
Հունվարի 1-ի դրությամբ թողարկված (աուդիտի չենթարկված)	250	250
Դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված, ամբողջովին վճարված	250	250
Հայտարարված բաժնետոմսեր - անվանական արժեք	10,000,000 դրամ	10,000,000 դրամ

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերին իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

### (բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով, բացառությամբ ստորև ներկայացված սահմանափակման:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չուներ բաշխման ենթակա պահուստներ (2017թ-ին նման պահուստներ չկային):

Հաշվետու ամսաթվի դրությամբ և 2018թ. ընթացքում շահաբաժիններ չեն հայտարարվել (2017թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել):

### (գ) Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալն իրենից ներկայացնում է կապակցված կողմից անհատույց ստացված ակտիվները 174,175 հազար դրամ գումարով՝ առանց շահութահարկի:



## 18. Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման, հիմնականում գործառնական գործունեությունից ստացվող դրամական միջոցների հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի վերահսկման միջոցով: Ձեռնարկելով այս քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Ստորև ներկայացված է Ընկերության պարտավորության և սեփական կապիտալի հարաբերակցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Ընդամենը պարտավորություններ	47,104,904	42,550,744
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	2,090,427	2,991,666
<b>Չուտ պարտավորություն</b>	<b>45,014,477</b>	<b>39,559,078</b>
Ընդամենը սեփական կապիտալ	(4,622,694)	(944,687)
<b>Չուտ պարտավորության և սեփական կապիտալի հարաբերակցությունը ղեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(9.7)</b>	<b>(41.9)</b>

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման Ընկերության մոտեցումը չի փոփոխվել:

Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների պահանջներ:

## 19. Պարտավորություններ Կոնցեսիայի պայմանագրի գծով

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	34,941,806	-
Պարտավորությունների աճ տարվա ընթացքում	-	32,386,976
Պարտավորությունների նվազում տարվա ընթացքում	(2,121,000)	(1,713,000)
Զեղչի ծախսագրում	4,624,589	4,267,830
<b>Մնացորդը ղեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>37,445,395</b>	<b>34,941,806</b>

## 20. Օժանդակ ակտիվներին վերադարձման պարտավորության գծով պահուստ

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ	1,388,441	-
Տարվա ընթացքում ձևավորված պահուստ	60,763	1,224,500
Գնահատման փոփոխություն	455,373	-
Զեղչի ծախսագրում	209,483	163,941
<b>Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2,114,060</b>	<b>1,388,441</b>

Օժանդակ ակտիվների վերադարձման պարտավորության գծով պահուստի չափմանը վերաբերող մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 24-ում:

## 21. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Ընկերության տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից	5,359,000	4,616,968
	<b>5,359,000</b>	<b>4,616,968</b>

### (ա) Պայմաններ և մարման ժամկետներ

Ստորև ներկայացված են չմարված փոխառությունների համար գործող պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ տոկոսադր.	Մարման տարին	31 դեկտեմբերի 2018թ.		31 դեկտեմբերի 2017թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից	ԱՄՆ դոլար	FedFund+ 0.85%	Ցպահանջ	5,359,000	5,359,000	4,616,968	4,616,968
				<b>5,359,000</b>	<b>5,359,000</b>	<b>4,616,968</b>	<b>4,616,968</b>

**(բ) Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի փոփոխությունների համադրում**

Ծնթց.	Պարտավորություններ		Ընդամենը
	Այլ վարկեր և փոխառություններ	Սեփական կապիտալ Բաժնետիրական կապիտալ	
հազ. դրամ			
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված	4,616,968	2,500,000	7,116,968
Մուտքեր վարկերից և փոխառություններից	724,223	-	724,223
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված	724,223	-	724,223
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցություն	(1,478)	-	(1,478)
<i>Պարտավորությունների հետ կապված փոփոխություններ</i>			
Տոկոսային ծախս	10		
Վճարված տոկոսներ	137,881	-	137,881
Աղբյուրի մոտ գանձվող շահութահարկի ծախս վճարված տոկոսներից	(94,347)	-	(94,347)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	(24,247)	-	(24,247)
Ընդամենը սեփական կապիտալի հետ կապված այլ փոփոխություններ	19,287	-	19,287
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-
Ծնթց.	Պարտավորություններ		Ընդամենը
	Այլ վարկեր և փոխառություններ	Սեփական կապիտալ Բաժնետիրական կապիտալ	
հազ. դրամ			
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված	-	1,500,000	1,500,000
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	-	1,000,000	1,000,000
Մուտքեր վարկերից և փոխառություններից	4,598,110	-	4,598,110
Ընդամենը փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքերի հետ կապված	4,598,110	1,000,000	5,598,110
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցություն	978	-	978
<i>Այլ փոփոխություններ</i>			
<i>Պարտավորությունների հետ կապված փոփոխություններ</i>			
Տոկոսային ծախս	10		
Վճարված տոկոսներ	48,572	-	48,572
Աղբյուրի մոտ գանձվող շահութահարկի ծախս վճարված տոկոսներից	(25,867)	-	(25,867)
Ընդամենը պարտավորությունների հետ կապված այլ փոփոխություններ	(4,825)	-	(4,825)
Ընդամենը սեփական կապիտալի հետ կապված այլ փոփոխություններ	17,880	-	17,880
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,616,968	2,500,000	7,116,968



## 22. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Կրեդիտորական պարտքեր	567,224	560,989
Հաճախորդներից ստացված կանխավճարներ	489,825	324,497
Աշխատավարձ	307,543	316,956
Արձակուրդային վճարների գծով պահուստ	292,166	267,581
Վճարվելիք հարկեր	355,730	32,145
Այլ	130,417	57,817
	<b>2,142,905</b>	<b>1,559,985</b>

Առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված արտաբժութային և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

## 23. Իրական արժեք և ռիսկերի կառավարում

### (ա) Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

### (բ) Իրական արժեքի չափում

**Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ**

Տեսակը	Գնահատման մեթոդ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Վարկեր և փոխառություններ	Ձեռչված դրամական միջոցների հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն
Այլ ֆինանսական պարտավորություններ*	Ձեռչված դրամական միջոցների հոսքերի մեթոդ	Կիրառելի չեն

\* Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, Կոնցեսիայի պայմանագրի գծով պարտավորությունները և առևտրական կրեդիտորական պարտքերը:

### (գ) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- պարտքային ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- շուկայական ռիսկ:

**(i) Ռիսկերի կառավարման հիմունքներ**

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Տնօրենների խորհրդին իր աշխատանքի վերաբերյալ:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների և Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Ընկերությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ պատկերացում կունենան իրենց դերերի և պարտականությունների մասին:

**(ii) Պարտքային ռիսկ**

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականություններն Ընկերության նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում հաճախորդներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի գծով:

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը:

Ստորև ներկայացված է շահույթում կամ վնասում ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստը:

**հազ. դրամ**

Հաճախորդների հետ պայմանագրերից առաջացող առևտրական դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստ

	<u>2018թ.</u>	<u>2017թ.</u>
	(877,379)	(507,042)

**Առևտրական դեբիտորական պարտքեր**

Պարտքային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում պայմանավորված է բաժանորդների կողմից պարտականությունների չկատարման հանգամանքով այն վայրերում, որտեղ գործում է Ընկերությունը: Ընկերությունը չունի մշակված քաղաքականություն, որը կպահանջեր յուրաքանչյուր նոր բաժանորդի վճարունակության վերլուծություն: Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրական դեբիտորական պարտքերի գծով, ինչպես նաև կանխավճար՝ վաճառքն իրականացնելուց առաջ:

Բաժանորդների հետ կապված պարտքային ռիսկը վերահսկելիս՝ բաժանորդները խմբավորվում են բնակչության և իրավաբանական անձանց ու վերլուծվում են ուշացված վճարումների վերաբերյալ վիճակագրական տվյալների հիման վրա:



Առևտրական դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային ռիսկին իր ենթարկվածություն սահմանափակելու համար Ընկերությունը վճարման առավելագույն ժամկետ է սահմանել մեկ ամիսն անհատ և իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների համար:

Ստորև ներկայացված է 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով պարտքային ռիսկին ենթարկվածությունն՝ ըստ պայմանագրային կողմերի տեսակների:

<b>հազ. դրամ</b>	<b>Հաշվեկշռային արժեք</b>	
	<b>2018թ.</b>	<b>2017թ.</b>
Բնակչություն	2,572,166	2,106,708
Իրավաբանական անձիք	844,604	757,857
	<b>3,416,770</b>	<b>2,864,565</b>

Ընկերության բաժանորդներից ոչ մեկը չունի արտաքին վարկանիշ:

**Համադրելի տեղեկատվությունը ՀՀՄՄ 39-ի համաձայն**

Ստորև ներկայացված է 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի ժամկետայնությունը:

<b>հազ. դրամ</b>	<b>Համախառն</b>	<b>Արժեզրկված</b>
Ոչ ժամկետանց	2,002,976	67,980
0-30 օր ժամկետանց	388,300	42,678
31-120 օր ժամկետանց	639,731	180,682
121-365 օր ժամկետանց	340,600	215,702
	<b>3,371,607</b>	<b>507,042</b>

**Սպասվող պարտքային վնասի գնահատում սպառողների համար հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ**

Ընկերությունն օգտագործում է պահուստների մատրիցը բոլոր բաժանորդների հետ կապված առևտրական դեբիտորական պարտքերի գծով սպասվող պարտքային վնասը չափելու համար, որը ներառում է մեծ թվով փոքր գումարով մնացորդներ:

Վնասի չափը հաշվարկվում է «roll rate» մեթոդի կիրառմամբ, որը հիմնված է այն հավանականության վրա, որ դեբիտորական պարտքը կանցնի ժամկետանցությունից մինչ դուրս գրում հաջորդական փուլերով: Վերաֆինանսավորման դրույքները հաշվարկվում են առանձին հիմունքով տարբեր սեգմենտների պարտքային ռիսկին ենթարկվող գործիքների համար՝ հիմք ընդունելով պարտքային ռիսկի հետևյալ ընդհանուր բնութագրերը՝ սպառողի տեսակը (անհատ կամ իրավաբանական անձ):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային ռիսկին ենթարկվածության և առանձին սպառողների հետ կապված առևտրական դեբիտորական պարտքերի և պայմանագրային ակտիվների գծով սպասվող պարտքային վնասի վերաբերյալ:

31 դեկտեմբերի 2018թ. հազ. դրամ	Միջին կշռված վնասի չափը	Համախառն հաշվեկշռային արժեք		Վնասի գծով պահուստ	Արժեզրկված
Ընթացիկ (ոչ ժամկետանց)	4%	2,159,146	80,696		Ոչ
1-30 օր ժամկետանց	15%	457,175	69,396		Ոչ
31-90 օր ժամկետանց	29%	665,525	194,351		Ոչ
91-180 օր ժամկետանց	49%	675,891	332,893		Այո
181-365 օր ժամկետանց	77%	583,148	446,779		Այո
Ավելի քան 365 օր ժամկետանց	100%	260,306	260,306		Այո
		<b>4,801,191</b>	<b>1,384,421</b>		

Վնասի չափը հաշվարկվում է վերջին երեք տարիների ընթացքում կրած փաստացի վնասի հիման վրա: Հաշվի առնելով առևտրական դեբիտորական պարտքերի մնացորդների կարճաժամկետ բնույթը (30 օր), Ընկերությունը չի ներառում հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը սպասվող պարտքային վնասի հաշվարկում:

**Առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի շարժը**

Ստորև ներկայացված է առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի շարժը տարվա ընթացքում: 2017թ. համադրելի տվյալներն իրենցից ներկայացնում են արժեզրկումից կորստի գծով պահուստը՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն	(507,042)	-
Ճշգրտումը ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառման ժամանակ	-	-
Մնացորդը հունվարի 1-ի դրությամբ՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն	(507,042)	-
Վնասի գծով պահուստի գուտ վերաչափում	(877,379)	(507,042)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<b>(1,384,421)</b>	<b>(507,042)</b>

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 2,090,274 հազար դրամ (2017թ-ին՝ 2,991,539 հազար դրամ) գումարով բանկային հաշիվների մնացորդներ (ընթացիկ հաշիվներ), որն իրենցից ներկայացնում է առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկին այս ակտիվների գծով: Բանկային հաշիվների մնացորդները (ընթացիկ հաշիվներ) պահվում են խոշոր հայկական բանկերում, և Ընկերությունը չի ակնկալում, որ այս պայմանագրային կողմերը չեն կատարի իրենց պարտականությունները:

Ընկերության գնահատմամբ ընթացիկ հաշիվների գծով արժեզրկումից կորուստ չի ճանաչվել հիմնականում վերջիններիս կարճաժամկետ բնույթի պատճառով:

**(iii) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է հնարավորինս ապահովել բավարար իրացվելիություն բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության հեղինակությունը վտանգելու:



Ընկերությունն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափ, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

Ստորև ներկայացված են ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետները հաշվետու ամսաթվի դրությամբ: Ներկայացված են համախառն և չգեղջված գումարները, որոնք ներառում են հաշվարկված տոկոսների վճարումները:

31 դեկտեմբերի 2018թ. հազ. դրամ Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորու- թյուններ Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից Պարտավորու- թյուններ Կոնցեսիայի պայմանագրի գծով Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
	Ջպահանջ	Սինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Հաշվեկշռ. արժեք	Ջպահանջ	Սինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
5,359,000	5,359,000	-	-	-	-	-
37,445,395	85,915,000	-	2,937,000	3,745,000	18,931,000	60,302,000
1,166,933	1,166,933	974,362	192,571	-	-	-
<b>43,971,328</b>	<b>92,440,933</b>	<b>974,362</b>	<b>3,129,571</b>	<b>3,745,000</b>	<b>18,931,000</b>	<b>60,302,000</b>
31 դեկտեմբերի 2017թ. հազ. դրամ Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորու- թյուններ Գրավով չապահովված փոխառություն կապակցված կողմից Պարտավորու- թյուններ Կոնցեսիայի պայմանագրի գծով Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	Պայմանագր. դրամական միջոցների հոսքեր	Մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
Հաշվեկշռ. արժեք	Ջպահանջ	Սինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	Ավելի քան 5 տարի
4,616,968	4,616,968	-	-	-	-	-
34,941,806	88,036,000	-	2,121,000	2,937,000	15,461,000	67,517,000
1,145,526	1,145,526	1,068,970	76,556	-	-	-
<b>40,704,300</b>	<b>93,798,494</b>	<b>1,068,970</b>	<b>2,197,556</b>	<b>2,937,000</b>	<b>15,461,000</b>	<b>67,517,000</b>

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով:



**(iv) Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում՝ փոխարժեքի դրույքների և տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Ընկերությունը չի կիրառում հեջի հաշվառում շահույթի կամ վնասի տատանումները կառավարելու համար:

**Արտարժույթային ռիսկ**

Արտարժույթային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը կապված է Ընկերության ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված վաճառքների, գնումների և փոխառությունների հետ: Այս գործարքներն հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

**Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին**

Ստորև ներկայացված է Ընկերության ենթարկվածությունն արտարժույթային ռիսկին՝ անվանական գումարների հիման վրա:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված 2018թ.	ԱՄՆ դոլարով արտահայտված 2017թ.
Վարկեր և փոխառություններ	(5,359,000)	(4,616,968)
	<b>(5,359,000)</b>	<b>(4,616,968)</b>

Տարվա ընթացքում կիրառվել են արտարժույթի հետևյալ փոխարժեքները՝

ՀՀ դրամով	Միջին փոխարժեք		Սփոթ փոխարժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	
	2018թ.	2017թ.	2018թ.	2017թ.
1 ԱՄՆ դոլար	483.93	482.63	483.75	484.10

**Ջգայունության վերլուծություն**

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% հնարավոր ողջամիտ արժևորվումը (արժեզրկվումը) ԱՄՆ դոլարի նկատմամբ ազդեցություն կունենար արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների չափման և շահույթի կամ վնասի վրա ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը ենթադրվում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	Արժևորում	Արժեզրկում
	Շահույթ կամ վնաս	Շահույթ կամ վնաս
<b>31 դեկտեմբերի 2018թ.</b>		
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ	428,720	(428,720)
<b>31 դեկտեմբերի 2017թ.</b>		
ՀՀ դրամի 10% շարժ ԱՄՆ դոլարի նկատմամբ	369,357	(369,357)

**Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Դեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկի կամ փոխառության դեպքում դեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև սարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

**Ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքների կառուցվածքը հետևյալն էր.

հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք	
	2018թ.	2017թ.
<b>Փոփոխական դրույքով գործիքներ</b>		
Ֆինանսական պարտավորություններ	5,359,000	4,616,968

**Դրամական միջոցների զգայունության վերլուծություն փոփոխական դրույքով գործիքների համար**

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխությունը 100 բազիսային կետով կավելացներ (կնվազեցներ) շահույթը կամ վնասը նախքան հարկումը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունն ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ:

հազ. դրամ	Շահույթ կամ վնաս	
	100 բլ ան	100 բլ նվազում
<b>2018թ.</b>		
Փոփոխական դրույքով գործիքներ	(50,388)	50,388
<b>Դրամական միջոցների հոսքերի զգայունություն (զուտ)</b>	<b>(50,388)</b>	<b>50,388</b>
<b>2017թ.</b>		
Փոփոխական դրույքով գործիքներ	(46,170)	46,170
<b>Դրամական միջոցների հոսքերի զգայունություն (զուտ)</b>	<b>(46,170)</b>	<b>46,170</b>



## 24. Կոնցեսիայի պայմանագիր

2016թ. նոյեմբերի 15-ին ստորագրվել է տասնհինգամյա պայմանագիր Ընկերության, ԿԺՕ-ի և Շնորհատու միջև, որը վերաբերում է ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների մատուցմանը Հայաստանում, տեխնիկական և կոմերցիոն կառավարմանը:

Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ընկերությունն ունի Ենթակառուցվածքն օգտագործելու բացառիկ իրավունք՝ ծառայությունների մատուցումն ապահովելու նպատակով:

Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ծառայությունների մատուցման համար հաճախորդներից գանձվող սակագները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից, սակայն կախված են նաև Կոնցեսիայի պայմանագրի մի շարք գործոններից, այդ թվում՝ եվրո/ՀՀ դրամ փոխարժեքից, ջրի սպառման ծավալներից, սղաճից և էլեկտրաէներգիայի գներից, հաճախորդներից հավաքագրումների դրույքներից:

### (ա) Կոնցեսիայի վճարների վճարում Շնորհատուին

Կոնցեսիոն պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է կոնցեսիայի ժամկետում Շնորհատուին վճարել կանոնավոր վճարումներ՝ պետական ծառայություններից օգտվելու համար վճար գանձելու իրավունք ստանալու համար:

Կոնցեսիայի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Ընկերության կողմից Շնորհատուին պահանջվում է կատարել հետևյալ վճարումները.

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Մինչև մեկ տարի	2,937,000	2,121,000
Մեկից հինգ տարի	22,676,000	18,398,000
Ավելի քան հինգ տարի	60,302,000	67,517,000
	<b>85,915,000</b>	<b>88,036,000</b>

Ընկերությունը ներառել է նշված վճարումների իրական արժեքը, որն իրենից ներկայացնում է Շնորհատուին կատարվող տարեկան վճարումների ներկա արժեքը՝ զեղչված մինչև հարկումը 13.5% դրույքով, կոնցեսիայի ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքում և ճանաչել կոնցեսիայի գծով պարտավորություն՝ Կոնցեսիայի պայմանագրի գործողության սկզբում:

Ձեռչի դրույքը որոշվել է հիմք ընդունելով տվյալ ոլորտի համար կապիտալի միջին կշռված արժեքի միջինը, որը հիմնված է պարտքի օգտագործման 28% հնարավոր տիրույթի վրա՝ 12.3% շուկայական տոկոսադրույքով:

### (բ) Գործառնական ծառայություններ

Ընկերությունը ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների գծով հասույթը և ծախսերը հաշվառում է ՖՀՄՄ 15-ի համաձայն:



**(գ) Շինարարության կամ արդիականացման ծառայություններ**

Կոնցեսիոն պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պարտավորվում է իրականացնել կապիտալ աշխատանքներ ջրամատակարարման ենթակառուցվածքի արդիականացման ուղղությամբ՝ 37,500,000 հազար դրամի չափով ՀՀ դրամ, ինչպես ներկայացված է ստորև բորվող աղյուսակում և պարտավոր է կատարել հետագա կապիտալ ծախսումներ անհրաժեշտության դեպքում:

Պայմանագրային տարի	Գումարը հազ. դրամ	Պայմանագրային տարի	Գումարը հազ. դրամ
1	1,500,000	11	2,750,000
2	1,750,000	12	2,500,000
3	2,250,000	13	2,500,000
4	2,750,000	14	2,500,000
5	2,750,000	15	2,500,000
6	2,750,000		
7	2,750,000		
8	2,750,000		
9	2,750,000		
10	2,750,000		

2018թ. դեկտեմբերի 12-ին, համաձայն Ընկերության, «Աեռիա Օ - Կոնսանի Ժենեդալ դե Օ», Ֆրանսիա («ԿԺՕ») և ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի միջև կնքված թիվ 8 պայմանագրի, 2019թ. համար նախատեսված սակագների ավելացումը հետաձգվեց մինչև 2025թ. և 2019թ. արդիականացման գծով պարտադիր աշխատանքները նվազեցվեցին 1,028,000 հազար դրամով:

Ընկերությունը շինարարության կամ արդիականացման ծառայությունների գծով հասույթը և ծախսերը հաշվառում է ՖՀՄՍ 15-ի համաձայն:

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Ընկերությունը ճանաչել է 21,584,519 հազար դրամ գումարով հասույթ (2017թ-ին՝ 19,403,375 հազար դրամ), որը բաղկացած է շինարարության ծառայություններին վերաբերող 3,081,769 հազար դրամ գումարից (2017թ-ին՝ 2,263,164 հազար դրամ) և ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայությունների վերաբերող 18,502,750 հազար դրամ գումարից (2017թ-ին՝ 17,140,211 հազար դրամ): 2018թ-ին և 2017թ-ին շինարարության գծով ճանաչված հասույթն իրենից ներկայացնում է ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման օբյեկտների վերակառուցման համար մատուցված շինարարական ծառայությունների իրական արժեքը: Այս ծառայությունները մատուցվել են օգտվողներից վճար գանձելու իրավունքի դիմաց և իրենցից ներկայացնում են ոչ դրամային ներդրումային գործառնություններ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ճանաչել է կոնցեսիայի պայմանագրի շրջանակներում շինարարության կամ արդիականացման ծառայություններ մատուցելու համար որպես հատուցում ստացված ոչ նյութական ակտիվ 3,081,769 ազար դրամի չափով (2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,263,164 հազար դրամի չափով): Ոչ նյութական ակտիվն իրենից ներկայացնում է պետական ծառայություններից օգտվելու համար վճար գանձելու իրավունք:

**(դ) Օժանդակ ակտիվներ**

2017թ. հունվարի 1-ին Կոնցեսիայի պայմանագրի շրջանակներում Ընկերությունը Շնորհատուից ստացել է 2,578,546 հազար դրամ իրական արժեքով սարքավորումներ և 1,980,083 հազար դրամ իրական արժեքով նյութեր որպես Օժանդակ ակտիվներ, ի լրումն ենթակառուցվածքի:

2018թ. ընթացքում Ընկերությունը Շնորհատուից ստացել է 68,466 հազար դրամ իրական արժեքով լրացուցիչ սարքավորումներ և 80,638 հազար դրամ իրական արժեքով նյութեր: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս միավորների գծով Օժանդակ ակտիվների վերադարձման պարտավորության գծով պահուստը կազմում էր 60,763 հազար դրամ (Ծանոթագրություն 20):

Այս ակտիվները ճանաչվում են որպես Ընկերության ակտիվներ, որոնք չափվում են իրական արժեքով սկզբնական ճանաչման ժամանակ:

Օպերատորը կարող է պահպանել, օգտագործել կամ վաճառել ակտիվներն իր հայեցողությամբ՝ ապահովելով սակայն հետագա օպերատորի կողմից ծառայությունների մատուցումը: Ընկերությունը պարտավոր է Կոնցեսիայի պայմանագրի վերջում Շնորհատուին փոխանցել (անհատուցման) Կոնցեսիայի պայմանագրի սկզբում իրեն տրամադրված Օժանդակ ակտիվներին համարժեք ակտիվներ: Այնուամենայնիվ, համարժեքությունը սահմանված չէ Կոնցեսիայի պայմանագրում:

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ճանաչել է վերադարձման պարտավորություն Օժանդակ ակտիվների գծով՝ համարժեքությունը դիտարկելով որպես Օժանդակ ակտիվների դրամային համարժեքություն: Վերադարձման պարտավորությունը ներառում է հետևյալ բաղադրիչները և չափվում է հետևյալ կերպ.

- պաշարների բաղադրիչ – Կոնցեսիայի պայմանագրի ժամկետի վերջում նյութերը փոխարինելու համար պահանջվող գումար: Պարտավորությունը չափվում է հիմք ընդունելով նյութերի ընթացիկ գները՝ ճշգրտված ղեկավարության կողմից գնահատված գնաճի դրույքով:
- հիմնական միջոցների բաղադրիչը – Կոնցեսիայի պայմանագրի ժամկետի վերջում հիմնական միջոցներն իրենց սկզբնական վիճակին վերականգնելու համար պահանջվող գումարի ղեկավարության լավագույն գնահատականը: Պարտավորությունը չափվում է հիմք ընդունելով հիմնական միջոցների ընթացիկ գները՝ ճշգրտված ղեկավարության կողմից գնահատված գնաճի դրույքով:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերադարձման պարտավորությունը զեղչվել է ռիսկի գործոն չպարունակող իրական 11.00% դրույքով (2017թ-ին՝ 13.39%):

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերադարձման պարտավորության և Օժանդակ ակտիվների իրական արժեքի միջև տարբերությունը ներկայացվել է որպես նվազեցում կոնցեսիայի ոչ նյութական ակտիվներից:



## 25. Պայմանական դեպքեր

### (ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրություն իր բոլոր շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ կերպով անդրադառնալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

### (բ) Դատական վարույթներ

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության արդյունքների կամ ֆինանսական վիճակի վրա:

### (գ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն գնահատել է հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

## 26. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Վերահսկողություն

Ընկերությունն ամբողջովին պատկանում է Վեոլիա Օ - «Կոմպանի Ժենեռալ դե Օ», Ֆրանսիա: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը և վերջնական վերահսկող կողմն է հանդիսանում Վեոլիա Ինվայրմենթ ՍԱ-ը: Վեոլիա Ինվայրմենթ ՍԱ-ն ներկայացնում է հանրությանը հասանելի ֆինանսական հաշվետվություններ:



**(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ**

***Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը***

Ստորև ներկայացված է տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմի կողմից ստացված վարձատրությունը, որը ներառված է վարչական ծախսերում:

հազ. դրամ	2018թ.	2017թ.
Արտերկրյա աշխատակիցներին կատարվող վճարումներ և այլ հատուցումներ	242,613	162,015
Աշխատավարձ և պարգևավճարներ	153,398	74,202

**(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ**

Ստորև ներկայացված են Ընկերության գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2018թ.	Գործարքի արժեքը 2017թ.	Մնացորդը 2018թ.	Մնացորդը 2017թ.
<b>Ստացված ծառայություններ</b>				
Վերջնական մայր կազմակերպություն	(181,969)	(179,990)	(166,298)	(37,968)
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	(83,177)	(45,808)	(8,449)	(2,503)
<b>Գնված ապրանքներ և հիմնական միջոցներ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	(57,170)	(507,208)	-	(3,655)
<b>Մատուցված ծառայություններ</b>				
Վերջնական մայր կազմակերպություն	5,334	-	-	-
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	5,466	40,132	3,093	-
<b>Կանխավճարներ ապրանքների և ծառայությունների համար</b>				
Վերջնական մայր կազմակերպություն	262,839	283,981	-	-
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	181,985	580,555	-	-
<b>Անհատույց ստացված ակտիվներ (Ծնթգ. 17(գ))</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	-	217,719	217,719	217,719
<b>Ստացված փոխառություններ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	(724,223)	(4,598,110)	(5,359,000)	(4,616,968)
<b>Այլ</b>				
Վերջնական մայր կազմակերպություն	(59,540)	(53,446)	-	-
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	(85,475)	(30,735)	(116,210)	(30,735)

Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունից ստացված փոխառության համար գործում է FedFund + 0.85% տարեկան տոկոսադրույք և այն ենթակա է մարման ըստ պահանջի: 2018թ. ընթացքում ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունից ստացված փոխառության գծով հաշվեգրվել է 137,881 հազար դրամ գումարով տոկոսային ծախս (2017թ-ին՝ 48,572 հազար դրամ):

## 27. Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

## 28. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

### (ա) Հասույթ

Ընկերությունը սկսել է կիրառել ՖՀՄՍ 15-ը 2018թ. հունվարի 1-ից: Հաճախորդների հետ պայմանագրերին վերաբերող ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 6-ի (դ) կետում: ՖՀՄՍ 15-ի սկզբնական կիրառման ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություն 5-ում:

### (գ) Ֆինանսական եկամուտ և ծախս

Ընկերության ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսերը ներառում են.

- տոկոսային եկամուտը
- տոկոսային ծախսը,
- փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը կամ վնասը ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

«Արդյունավետ տոկոսադրույքը» այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև՝

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը, կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Տոկոսային եկամտի կամ ծախսի հաշվարկի ժամանակ արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (եթե ակտիվն արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:



**(գ) Արտարժույթով գործարքներ**

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույթով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացած տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**(դ) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ ծառայության արդյունք, և պարտականությունը կարելի է արժանահավատորեն գնահատել:

**(ե) Ծախրահարկ**

Ծախրահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Այն ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

**(i) Ընթացիկ հարկ**

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

**(ii) Հետաձգված հարկ**

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով:

Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:



Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

#### **(գ) Պաշարներ**

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը՝ մուտք, առաջինը՝ ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա վայրում գտնվելու և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

#### **(ե) Հիմնական միջոցներ**

##### **(i) Ծանաչում և չափում**

Հիմնական միջոցների միավորները, բացառությամբ հողատարածքը, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Մեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումներ, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսումները: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախս» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

**(ii) Ենթակառուցվածք**

ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 12 «Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ» համաձայն՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայություններում օգտագործվող ակտիվները («Ենթակառուցվածք») չեն ճանաչվում որպես Ընկերության հիմնական միջոցներ՝ հետևյալ երկու պայմանները բավարարելու դեպքում.

- Շնորհատուն վերահսկում կամ կարգավորում է Ընկերության կողմից մատուցման ենթակա ծառայությունները՝ օգտագործելով Ենթակառուցվածքը, ծառայությունների շահառուներին և կիրառվող գները,
- Շնորհատուն վերահսկում է Ենթակառուցվածքի գծով ցանկացած նշանակալի մնացորդային շահ՝ համաձայնության ժամկետի ավարտին:

**(iii) Հետագա ծախսումներ**

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ ծախսումների հետ կապված ապագա տնտեսական օգուտները:

Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

**(iv) Մաշվածություն**

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում՝ կիրառելով գծային մեթոդը, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- |                                |           |
|--------------------------------|-----------|
| • մեքենա-սարքավորումներ        | 3-10 տարի |
| • փոխադրամիջոցներ              | 3-10 տարի |
| • տնտեսական գույք              | 3-10 տարի |
| • համակարգչային սարքավորումներ | 2-5 տարի  |
| • այլ                          | 4-10 տարի |



Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(ը) Ոչ նյութական ակտիվներ**

**(i) Կոնցեսիայի պայմանագրեր**

Ընկերությունը ճանաչում է ծառայությունների մատուցման կոնցեսիայի պայմանագրից առաջացող ոչ նյութական ակտիվը, երբ ստանում է կոնցեսիայի ենթակառուցվածքից օգտվելու համար վճար գանձելու իրավունք: Կոնցեսիային պայմանագրի շրջանակներում շինարարության կամ արդիականացման ծառայություններ մատուցելու դիմաց որպես հատուցում ստացված ոչ նյութական ակտիվը չափվում է սկզբնական ճանաչման պահին գործող իրական արժեքով՝ հիմք ընդունելով մատուցված ծառայությունների իրական արժեքը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը չափվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեքկումից կորուստները:

Ծառայությունների մատուցման կոնցեսիայի պայմանագրից առաջացող ոչ նյութական ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետն իրենից ներկայացնում է այն ժամկետը, որը սկսվում է այն պահից, երբ Ընկերությունը կարող է վճար գանձել է կոնցեսիայի ենթակառուցվածքից օգտվողներից մինչև կոնցեսիայի ժամկետի ավարտը:

**(ii) Այլ ոչ նյութական ակտիվներ**

Ընկերության կողմից ձեռք բերված այլ ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեքկումից կորուստները:

**(iii) Հետագա ծախսումներ**

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

**(iv) Ամորտիզացիա**

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի գծով՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում՝ դրանց շահագործման համար մատչելի դառնալու պահից՝ կիրառելով գծային մեթոդը, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- |                                    |  |
|------------------------------------|--|
| • կոնցեսիայի ոչ նյութական ակտիվներ | Կոնցեսիայի պայմանագրի գործողության ժամկետը |
| • այլ                              | 5-15 տարի                                  |

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(թ) Ֆինանսական գործիքներ**

**(i) Ծանաչում և սկզբնական չափում**

Առևտրական դեբիտորական պարտքերի սկզբնական ճանաչումը տեղի է ունենում դրանց առաջացման օրը: Մյուս բոլոր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ֆինանսական ակտիվի (եթե այն առևտրական դեբիտորական պարտք չէ, որը չի պարունակում էական ֆինանսավորման բաղկացուցիչ) կամ ֆինանսական պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող միավորի համար, գործիքի ձեռքբերմանը կամ թողարկմանն ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Էական ֆինանսավորման բաղկացուցիչ չպարունակող առևտրական դեբիտորական պարտքի սկզբնական չափումն իրականացվում է գործարքի գնով:

**(ii) Դասակարգում և հետագա չափում**

**Ֆինանսական ակտիվներ – 2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն**

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող:

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը, որի դեպքում բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց վրա ազդում է այդ փոփոխությունը, վերադասակարգվում են բիզնես մոդելի փոփոխությանը հաջորդող առաջին հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական միջոցների հոսքեր հավաքագրելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացում են դրամական միջոցների հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Այս ֆինանսական ակտիվները ներառում են բոլոր ածանցյալ ֆինանսական ակտիվները: Սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անդառնալիորեն նախատեսել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման պահանջները, որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե դա թույլ կտա վերացնել կամ էականորեն նվազեցնել հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանա:



**Ֆինանսական ակտիվներ – Բիզնես մոդելի գնահատում. 2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն**

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Գնահատման ժամանակ դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, տոկոսադրույքների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների մարման ժամկետների համապատասխանեցմանը համապատասխան պարտավորությունների մարման ժամկետներին կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ դրամական միջոցների հոսքերի իրացման ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Ընկերության ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը կախված է կառավարվող ակտիվների իրական արժեքից կամ ակտիվներից հավաքագրվող պայմանագրային դրամական միջոցների հոսքերից:
- ֆինանսական ակտիվների նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները:

Ֆինանսական ակտիվների փոխանցումը երրորդ կողմերին այնպիսի գործարքներում, որոնք չեն բավարարում ապաճանաչման պայմանները, չի դիտարկվում է որպես վաճառք այս նպատակի համար, և Ընկերությունը շարունակում է ճանաչել ակտիվները:

**Ֆինանսական ակտիվներ – Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ. 2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չի բավարարի այդ պայմանը: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.

- պայմանական ղեպքերը, որոնք կարող են փոխել դրամական միջոցների գումարը կամ ժամկետները,
- վաղաժամկետ մարման և գործողության ժամկետի երկարաձգման պայմանները,



- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ (օրինակ՝ ոչ վերադարձնելի ֆինանսական ակտիվից):

Վաղաժամկետ մարման պայմանը համապատասխանում է միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշին, եթե վաղաժամկետ մարման գումարը, ըստ էության, իրենից ներկայացնում է մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների չվճարված գումարները, որոնք կարող են ներառել լրացուցիչ ողջամիտ հատուցում պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար:

#### **Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս. 2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն**

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների դասին: Այդ ակտիվները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ամորտիզացված արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով: Տոկոսային եկամուտը, փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը և արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

#### **Ֆինանսական ակտիվներ – նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն**

Ընկերությունն իր ֆինանսական ակտիվները դասում էր փոխառությունների և առևտրական դեբիտորական պարտքերի դասին:

#### **Ֆինանսական ակտիվներ – Հետագա չափում, շահույթ և վնաս. նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն**

Փոխառությունները և առևտրական դեբիտորական պարտքերը չափվում էին ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

#### **Ֆինանսական պարտավորություններ – Դասակարգում, հետագա չափում, շահույթ և վնաս**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսը և փոխարժեքային տարբերություններից առաջացող շահույթը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ապաճանաչումից առաջացող ցանկացած շահույթը կամ վնասը նույնպես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

#### **(iii) Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների փոփոխություն**

##### **Ֆինանսական ակտիվներ**

Եթե ֆինանսական ակտիվի պայմանները փոխվում են, Ընկերությունը գնահատում է, թե արդյոք փոփոխված ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են («նշանակալի փոփոխություն»), ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս դեպքում սկզբնական ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է և ճանաչվում է նոր ֆինանսական ակտիվ՝ իրական արժեքով:



Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում, այսինքն, գնահատում է, թե արդյոք սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբերվում են փոփոխված կամ փոխարինող ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերից: Ընկերությունը գնահատում է փոփոխության նշանակալի լինելը քանակական և որակական գործոնների հիման վրա հետևյալ հերթականությամբ՝ որակական գործոններ, քանակական գործոններ, որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցություն: Եթե դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, ապա սկզբնական ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները համարվում են ուժը կորցրած: Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը կիրառում է ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման ուղեցույցին նմանատիպ ուղեցույց:

Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է ելնելով հետևյալ որակական գործոններից.

- ֆինանսական ակտիվի արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- ֆինանսական ակտիվի պայմանների այնպիսի փոփոխություն, որի արդյունքում միայն մայր գումարի և տոկոսների վճարում հանդիսանալու չափանիշը չի բավարարվում (օրինակ՝ փոխարկման պայմանի ավելացում):

Եթե ամորտիզացված արժեքով հաշվառվող փոփոխված ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր չեն, փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչմանը: Այս դեպքում, Ընկերությունը վերահաշվարկում է ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը և համախառն հաշվեկշռային արժեքի ճշգրտումից առաջացող գումարը ճանաչում է որպես փոփոխության գծով շահույթ կամ վնաս՝ շահույթի կամ վնասի կազմում: Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը վերահաշվարկվում է որպես ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով գեղչված, վերանայված կամ փոփոխված պայմանագրային դրամական միջոցների ներկա արժեք: Ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են փոփոխված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված ֆինանսական ակտիվի գործողության մնացած ժամկետի ընթացքում:

### **Ֆինանսական պարտավորություններ**

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պայմաններով պարտավորության գծով դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են: Այս դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով: Մարված ֆինանսական պարտավորության և փոփոխված պայմաններով նոր ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե փոփոխությունը (կամ փոխարինումը) չի հանգեցնում ֆինանսական պարտավորության ապաճանաչմանը, Ընկերությունը կիրառում է այն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, համաձայն որի ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է, երբ փոփոխությունը չի հանգեցնում ֆինանսական ակտիվի ապաճանաչման, այսինքն, Ընկերությունը ճանաչում է փոփոխության (կամ փոխարինման) արդյունքում առաջացող ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի ճշգրտումը շահույթում կամ վնասում փոփոխության (կամ փոխարինման) ամսաթվի դրությամբ:



Գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունների գծով դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները չեն համարվում փոփոխություն, եթե հանդիսանում են գործող պայմանագրային պայմանների արդյունք:

Ընկերությունն իրականացնում է փոփոխության նշանակալի լինելու քանակական և որակական գնահատում՝ դիտարկելով որակական գործոնները, քանակական գործոնները և որակական և քանակական գործոնների համատեղ ազդեցությունը: Ընկերությունը եզրահանգում է, որ փոփոխությունը նշանակալի է հետևյալ որակական գործոնների հիման վրա.

- ֆինանսական պարտավորության արժույթի փոփոխություն,
- գրավի կամ ապահովվածության այլ միջոցների փոփոխություն,
- փոխարկման պայմանի ավելացում,
- ֆինանսական պարտավորության ստորադասության փոփոխություն:

Քանակական գնահատման համար պայմանները նշանակալիորեն տարբեր են, եթե նոր պայմանների համաձայն դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքը, ներառյալ՝ վճարված վճարները (առանց ստացված վճարների)՝ զեղչված սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով, առնվազն 10 տոկոսով տարբերվում է սկզբնական ֆինանսական պարտավորության գծով մնացած դրամական միջոցների հոսքերի զեղչված ներկա արժեքից: Եթե պարտքային գործիքների փոխարինումը կամ վերջիններիս պայմանների փոփոխությունը հաշվառվում է որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճանաչվում են որպես մարումից շահույթի կամ վնասի մաս: Եթե փոխարինումը կամ պայմանների փոփոխությունը չի հաշվառվում որպես մարում, ապա ցանկացած կրած ծախսերը կամ վճարված վճարները ճշգրտում են պարտավորության հաշվեկշռային արժեքը և ամորտիզացվում են փոփոխված պարտավորության գործողության մնացած ժամկետի ընթացքում:

#### (iv) Ապաճանաչում

##### **Ֆինանսական ակտիվներ**

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում, Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում վերահսկողությունը ֆինանսական ակտիվի նկատմամբ:

##### **Ֆինանսական պարտավորություններ**

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է: Ընկերությունը մաս ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ փոփոխվում են վերջինիս պայմանները և երբ փոփոխված պարտավորությունից առաջացող դրամական միջոցների հոսքերը նշանակալիորեն տարբեր են, որի դեպքում փոփոխված պայմանների հիման վրա ճանաչվում է նոր ֆինանսական պարտավորություն՝ իրական արժեքով:



Ֆինանսական պարտավորության ապաճանաչման ժամանակ մարված հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ՝ փոխանցված ոչ դրամային ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

**(v) Հաշվանցում**

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են և ներկայացվում են զուտ գումարով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի գումարները հաշվանցելու ներկայումս իրագործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

**(ժ) Բաժնետիրական կապիտալ**

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

**(հ) Արժեզրկում**

**(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ**

**2018թ. հունվարի 1-ից կիրառելի քաղաքականություն**

*Ֆինանսական գործիքներ*

Ընկերությունը ճանաչում է սպավող պարտքային վնասի գծով պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար:

Առևտրական դեբիտորական պարտքերի վնասի գծով պահուստը միշտ չափվում է ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասին հավասար գումարի չափով:

Երբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչումից հետո և երբ գնահատում է սպասվող պարտքային վնասը, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսերի կամ ջանքերի: Գնահատումը ներառում է թե՛ քանակական և թե՛ որակական տվյալները, ինչպես նաև Ընկերության նախկին փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի էական աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով պարտականությունները չեն կատարվել, եթե՝

- հավանական չէ, որ փոխառուն ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Ընկերության նկատմամբ, եթե Ընկերությունը չձեռնարկի համապատասխան քայլեր, կամ
- ֆինանսական ակտիվն ավելի քան 365 օր ժամկետանց է:

Ֆինանսական գործիքի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է այն սպասվող պարտքային վնասը, որն առաջանում է պարտավորությունների չկատարման բոլոր հնարավոր դեպքերի արդյունքում ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամկետի ընթացքում:

Սպասվող պարտքային վնասի գնահատման ժամանակ դիտարկվող առավելագույն ժամկետն իրենից ներկայացնում է առավելագույն պայմանագրային ժամկետը, որի ընթացքում Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի:

#### *Սպասվող պարտքային վնասի չափում*

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է պարտքային վնասի հավանականությունից ելնելով կշռված պարտքային վնասի գնահատականը: Պարտքային վնասը չափվում է որպես որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ որպես տարբերություն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Ընկերությունը պետք է ստանա պայմանագրի համաձայն, և որոնք ակնկալում է ստանալ):

Առևտրական դեբիտորական պարտքերի կարճ ժամկետի պատճառով սպասվող պարտքային վնասը չի գեղջվում:

#### *Արժեզրկված ֆինանսական ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է անորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներն արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե տեղի են ունցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք բացասական ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի գծով գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի արժեզրկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, այդ թվում՝ պարտականությունների չկատարումը կամ վճարման ավելի քան 90 օր ուշացումը,
- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունը այլ պայմաններում չէր դիտարկի,
- փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը:



## **Մպասվող պարտքային վնասի ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում**

Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վնասի գծով պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

### *Դուրսգրում*

Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, եթե Ընկերությունը չունի ողջամիտ հիմքեր ակնկալելու ֆինանսական ակտիվի ամբողջական կամ մասնակի փոխհատուցումը: Իր բաժանորդների համար Ընկերությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքի դուրսգրման քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան երեք տարի ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գումարների փոխհատուցման նախկին փորձը: Ընկերությունը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ, դուրսգրված ֆինանսական ակտիվները կարող են դեռևս հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

## **Նախքան 2018թ. հունվարի 1-ը կիրառվող քաղաքականություն**

### *Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ*

Ֆինանսական ակտիվները, որոնք չէին դասվել շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող դասին, գնահատվում էին յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում էր հետևյալը.

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապահի կողմից,
- Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- պարտապահի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները,
- փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները, կամ
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում էին ֆինանսական ակտիվների խմբից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազման մասին:

### *Անորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ*

Ընկերությունն այս ակտիվները դիտարկում էր արժեզրկման վկայության առանձին և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվները գնահատվում էին արժեզրկման տեսանկյունից՝ առանձին հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի ակտիվների արժեզրկման առանձին վկայություն չէր հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն առանձին չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Ակտիվները, որոնք առանձին վերցված նշանակալի չէին, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով: Հավաքական գնահատումն իրականացվում էր խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով փոխառությունները և դերիտորական պարտքերը:



Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում էր մարումների ժամկետների և կրած վնասի գումարի վերաբերյալ նախորդ ժամանակաշրջանների տվյալները և կատարում էր դատողություն, եթե ընթացիկ տնտեսական և վարկավորման պայմանները թույլ էին տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լիներ նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում էր որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում էր շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում: Եթե Ընկերությունը գտնում էր, որ չկա ակտիվը փոխհատուցելու իրատեսական հնարավորություն, համապատասխան գումարները դուրս էին գրվում: Եթե արժեզրկումից կորստի գումարը հետագայում նվազում էր, և այդ նվազումը կարելի էր անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորստի գումարը հակադարձվում էր շահույթի կամ վնասի միջոցով:

**(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ**

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս գնահատված փոխհատուցվող գումարը:

Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը գեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը գեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները տեղաբաշխվում են՝ դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով նվազեցնելու համար:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլինի:



**(լ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը գեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Ձեռչի գծով ծախսը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

**29. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Երկու նոր ստանդարտներ գործում են 2018թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, և թույլատրվում է դրանց ժամանակից շուտ կիրառումը: Այնուամենայնիվ, այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը ժամանակից շուտ չի կիրառել նոր կամ փոփոխված ստանդարտները:

**(ա) ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»**

Ընկերությունից պահանջվում է կիրառել ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» ստանդարտը 2019թ. հունվարի 1-ից: Ընկերության գնահատմամբ ՖՀՄՍ 16-ի սկզբնական կիրառումը կունենա ստորև ներկայացվող ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ ՖՀՄՍ 16-ի կիրառման փաստացի ազդեցությունը կարող է փոփոխվել, քանի որ նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կարող է փոխվել այնքան ժամանակ, մինչև որ Ընկերությունը չներկայացնի սկզբնական կիրառման ամսաթիվը ներառող իր ֆինանսական հաշվետվությունների առաջին փաթեթը:

ՖՀՄՍ 16-ը սահմանում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել վարձակալության համար: Վարձակալը ճանաչում օգտագործման իրավունք հանդիսացող ակտիվը, որն իրենից ներկայացնում է ելակետային ակտիվն օգտագործելու իրավունք, և վարձակալության գծով պարտավորությունը, որն իրենից ներկայացնում է վարձավճարների վճարման պարտականություն: Նախատեսված են բացառություններ կարճաժամկետ վարձակալության և ցածր արժեք ունեցող միավորների վարձակալության համար: Վարձատուի համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, վարձատուն շարունակում է դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:

ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՍԿ մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները:

**(i) Վարձակալություն, որի շրջանակներում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ**

Ընկերությունն ավարտել է իր ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 16-ի կիրառման հնարավոր ազդեցության նախնական գնահատումը, սակայն դեռ չի իրականացրել մանրամասն գնահատումը: Ֆինանսական հաշվետվությունների վրա ՖՀՄՍ 16-ի փաստացի ազդեցությունը սկզբնական կիրառման ժամանակ կախված կլինի ապագա տնտեսական պայմաններից, Ընկերության վարձակալության պայմանագրերի պորտֆելի կառուցվածքից, Ընկերության որոշումից, թե արդյոք այն կօգտվի վարձակալությունը երկարաձգելու հնարավորություններից, ինչպես նաև ստանդարտով նախատեսված գործանական բնույթի պարզեցումներից և ճանաչման հետ կապված ազատումներից օգտվելու չափից:

Ընկերություն մտադիր է օգտվել գործանական բնույթի պարզեցումներից իր գործառնական վարձակալության կարճաժամկետ պայմանագրերի հետ կապված: Ընկերության նախնական գնահատմամբ չի ակնկալվում էական ազդեցություն վարձակալության այն պայմանագրերի վրա, որոնք շրջանակներում Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձակալ:

**(ii) Անցումը ստանդարտին**

Ընկերությունը մտադիր է սկսել ՖՀՄՍ 16-ի կիրառումը 2019թ. հունվարի 1-ից՝ կիրառելով ձևափոխված հետընթաց մոտեցումը: Այդ իսկ պատճառով, ՖՀՄՍ 16-ի կիրառման կունույատիվ ազդեցությունը կճանաչվի որպես չբաշխված շահույթի 2019թ. հունվարի 1-ի դրությամբ տարեսկզբի մնացորդի ճշգրտում՝ առանց համադրելի տեղեկատվության վերահաշվարկի:

Ստանդարտին անցնելիս Ընկերությունը մտադիր է օգտվել վարձակալության սահմանմանը վերաբերող գործնական բնույթի պարզեցումից: Սա նշանակում է, որ ՖՀՄՍ 16-ը կկիրառվի նախքան 2019թ. հունվարի 1-ը կնքված և ՀՀՄՍ 17 և ՖՀՄՍԿ մեկնաբանություն 4 համաձայն որպես վարձակալություն նույնականացված բոլոր պայմանագրերի նկատմամբ:

**(բ) Այլ ստանդարտներ և մեկնաբանություններ**

Ստորև ներկայացված փոփոխված ստանդարտները և դրանց մեկնաբանություններն ըստ ակնկալիքների էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 23 «Շահութահարկի հաշվառման հետ կապված անորոշություն»
- Վաղաժամկետ մարման պայման բացասական հատուցմամբ (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ)
- Երկարաժամկետ մասնակցություններ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում (ՀՀՄՍ 28-ի փոփոխություններ)
- Պլանի փոփոխություն, կրճատում կամ մարում (ՀՀՄՍ 19-ի փոփոխություններ)
- ՖՀՄՍ-ների տարեկան կատարելագործումներ, 2015-2017թթ. ժամանակաշրջան – տարբեր ստանդարտներ
- Կոնցեպտուալ հիմունքներին հղումների փոփոխություններ ՖՀՄՍ ստանդարտներում
- ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր